



ՀԱՅԻՐԱՅԻՆ ԴԱՐԱՆ

ԱՐԴԱՐԱՆԻ ԴԱՐԱՆ

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 143

18 ԱՊՐԻԼ 1914

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ

ԵՍ ԵՐ
ԶԵՆԱՐ
ՏՈՐԻՆԻ

ՏՕՆԱՑՈՅՑ

Ապրիլ 19	†	Կիր	դկ.	Բ.	Նոր Կիրակի:
20		Բշ.	աձ.	Թ.	or Յինանց:
21		Դշ.	ակ.	Ժ.	or Յինանց:
22		Դշ.	քձ.	ԺԱ.	or Յինանց:
23		Եշ.	քկ.	ԺԲ.	or Յինանց:
24		Ուր.	գձ.	ԺԳ.	or Յինանց:
25		Շք.	գկ.	ԺԴ.	or Յինանց:

ԿԱՐԵՒՈՐ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Երկար ժամանակի ի վեր պէսքն զգացուած է Ս. Գրոց ընտիր քարգմանութեան մը Հայերէն աշխարհաբար եւ Թուրքերէն լեզուներու: Այժմ Վեր. Յիսուսեան Հարց ջանիւք սոյն պէսքին գոհացում տրուած է մասամբ: Արդի գիտուններու հետազոտութեամբ հոխացած, բնագիրներու վրայէ քարգմանած են յիշեալ Հարց Հայերէն աշխարհաբարի եւ Թուրքերէնի՝ չորս Աւետարաններն ու Առաքելոց Գործերը, ուղղելով գրչագիրներու սխալներն ու անհեղուքիւնները, եւ մքին ու դժուարիմաց խօսքերուն համար աւելցնելով համառօտ, դիւրիմաց եւ կարեւոր ծանօթութիւններ:

Լաւ բուղք եւ մաքուր տպագրութիւն:

ԳԻՆ. Կազմեալ 12 դահեկան, թղթակազմ 8 դահեկան, մէն մի տետր քարգոմակազմ 3 դահեկան:

Կը գտնուի՝ Բերա, Պատրիարքարան Կաթողիկէ Հայոց (Պայրամ փողոց), եւ Վեր. Յիսուսեան Հարց քով, եւ Պոլիս Պալենց եւ Նազրնեան գրավանդաններու քով. եւ Հայաստանի գաւառաց մէջ, նմանապէս Վեր. Յիսուսեան Հարց վանքերը, (Պէյրուք, Ատանա, Կեսարիա, Սեբասիա, Նիզդիկիա, Ամասիա եւ Մարգուան):



ԿԱԹՈՂՈՍԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԴՐԱԿԱՆ
ՇԱՐԲԱԹ-ԱԹ-ԵՐԹ-

Չորրորդ տարի Թ 18 Ապրիլ 1914 Թիւ 143

«Սրբազան Բանանայապետն Պիոս Ժ. կը մաղթէ որ Կաթողիկէ Արձագանգ շաբաթերը շա-
բունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կա-
սարել, ի բարգաւաճանս կրօնից եւ ի նպեւոռ օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար
Սրբազան Հայրս սրտազին կ'օրոնէ յիշեալ Շաբաթաբերը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Նամակ կարդ. Սէր Եւ Լալի, առ Ամեւ. Տ. Պիոս Պետրոս Ժ. Բ. Թոգեան, Կաթողիկէ Պատրիարք Կրկնի
23 Նոյեմբեր 1912, ընդ ՍՄԾՍ քուսնամարտ:

ԴԵՊՔՆԷՐ ԵՒ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐ

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՆԻ Ի ՄԵՌՆԵԼՈՅ

Քրիստոսի Ս. Յարութիւնը տիեզերքի զէպ-
քերուն ամենէն հաւաստին եւ ամենէն կարկա-
ռունն է, որ ժամանակի միջոցեան ծոցէն գե-
ղափայլ երեւան կու գայ եւ լոյս կը սփռէ ո՛չ
միայն իրմէ առաջ եղած նշանաւոր զէպքե-
րուն վրայ, այլ նաեւ ակներեւ ցոյց կու տայ՝
ապագային, մինչեւ անդամ յաւիտենակա-
նութեան մէջ տեղի ունենալիքները, զո-
րոնք Յիսուս իր մահկանացու կեանքին մէջ
յայտնած էր:

Ս. Եկեղեցին Յարութեան ամենամեծ
զէպքը յաւերժացնելու, անոր ազգած վեհ
խորհուրդներով, բարձր զգացումներով իր

զաւակներուն միտքերն ու սիրտերը տոգո-
րելու համար, անոր յիշատակին նուիրած է,
տարուան ամբողջ կիրակներէն զատ, Զա-
տիկը եւ անոր յաջորդող օրերը, մինչեւ Համ-
բարձում: Այս միջոցն իր բոլոր տաճարները
կ'արձադանգեն անդադար սա քսանդարեան
հոգեցուց աւետիսը. Քրիստոս յարեալ ի մե-
ռելոց:

Ամէն քրիստոնեաներ ալ կը լսեն, այս մի-
ջոցն, եւ իրարու կ'ըսեն. Քրիստոս յարեալ
ի մեռելոց. բայց շատերը չեն քաղեր այս
խօսքէն այն օգուտները, զորոնք քաղեցին
առաքելակները եւ նախկին քրիստոնեաները,
որովհետեւ անտարբերութեամբ եւ թեթեւո-
թեամբ կ'արտասանեն նոյնը. Ո՛չ, օգուտե-
լու համար պէտք է համոզմամբ կրկնել այս
սքանչելի խօսքը, որուն ճշմարտութիւնը կը
հաստատեն ամէնքը: Քրիստոս յարեալ ի մե-
ռելոց, կը գոչեն իւրաքանչիւր կրկնող, ի տես

դատարկ գերեզմանին և փայլակնաձեւ հրեշ-տակին, որ տապալած գերեզմանաքարին վը-րայ նստած կ'աւետէ Քրիստոսի Յարութիւ-նը: Քրիստոս յարեալ ի մեռելոց, յաղթա-կանօրէն կ'աղաղակեն առաքեալները որ Յա-րութենէն վերջը զանիկայ տեսան, անոր հետ խօսեցան, կերան, խմեցին, որ, երկար ատեն տարակուսելէ յետոյ վերջապէս հա-ւատացին, երբ շօշափեցին անոր ձեռքերուն և ոտքերուն և կրղին վէրքերը: Քրիստոս յա-րեալ ի մեռելոց, կը հաւատասեն հինգ հարիւրէ աւելի աշակերտները որ անոր երկինք վերանա-լը տեսնելու երջանկութիւնն ունեցան: Քրիս-տոս յարեալ ի մեռելոց, կ'ըսեն գերեզմանին պահապանները, որ այս հրաշալի դէպքէն ա-հաբեկած կը վազեն կ'երթան, լուր կը տա-նին Երուսաղէմ: Քրիստոս յարեալ ի մեռե-լոց, ակամայ կը յայտարարեն նոյն իսկ իր թշնամիները: Յրաուս անոնց կանխաւ ցոյց տուած էր իր յարութիւնը իբրեւ նշան իր առաքեալներին բնութեան և առաքելութեան: Ուստի անոնք ամէն տեսակ միջոց ձեռք ա-ռին՝ որպէս զի չըլլայ թէ անոր մարմինը գե-րեզմանէն վերցուի և, իբրեւ յարութիւն ա-ռած ցոյց տրուելով. անոր խօսքը կատար-ուած համարուի: Պիղատոսէն զինուորներ կ'առնուն կ'երթան գերեզմանը կը կնքեն, զայն խիստ պահպանութեան կ'ենթարկեն, և կը յուսան երեք օր վերջը երեւան հանել Քրիստոսի խաբեքայութիւնը և խայտառա-կել անոր հետեւողները, ցոյց տալով անոր դիակը: Բայց իրենք կը խայտառակուին, երբ ահաբեկ պահապաններէն կը լսեն Քրիստոսի յարութիւնը, և անոնց շատ կաշառք տա-լով կը հրամայեն որ ըսեն թէ՝ Գիշերը քուն եղած ատեննին Քրիստոսի աշակերտները ե-կան գողցան անոր մարմինը. այլանդակ հա-կասութիւն, որով կը խոստովանէին Քրիս-տոսի յարութեան ճշմարտութիւնը: Իբար-ձեալ կը խոստովանին Քրիստոսի յարութիւ-նը երբ չկրնալով սուտ հանել առաքեալները որ զայն կը քարոզէին, կը շատանան հրա-մայել անոնց որ լռեն և այդ մասին չխօսին:

Քրիստոս յարեալ ի մեռելոց. հակառակ յամառ հրէից դրած արգելքներով՝ առաքե-

աւները շարունակեցին բարձրարարաւ յեղ-յեղել այս խօսքը որուն ճշմարտութեան հա-մողուած էին ամէն կերպով: Ամէն բանէ ա-ռաջ, ամէն բանէ աւելի քարոզեցին անոնք Քրիստոսի Սուրբ Յարութիւնը, և զայն քա-րոզելով յաջողեցան դարձի բերել մարդկու-թիւնը: Անոր վրայ հաստատեցին Եկեղեցին: Չայն նկատեցին իբրեւ հիմ քրիստոնէս-թեան, այնպէս որ անոնցմէ մէկ կ'ըսէ. Եթէ Քրիստոս չիցէ յարուցեալ ընդունալն է քարոզութիւնն մեր, ընդունալն եմ եւ հա-ւատքն մեր. (Ա. Կորնթ. ԺԵ, 14). Եւ վեր-ջապէս անոր ճշմարտութիւնը արիւնով կըն-քեցին ոչ միայն իրենք այլ և անթիւ ան-համար հաւատացեալներ:

Ինչո՞ւ համար արդեօք Աստուած կարծես մասնաւոր հոգ և խնամք մը տարեր է այս-պէս ամենաբացայայտ կերպով երեւան բերե-լու Քրիստոսի յարութեան ճշմարտութիւնը, և Առաքեալները ամէն բանէ աւելի ջանա-ցեր են նոյնը քարոզելու. պատճառը շատ յայտնի է. որովհետեւ կրօնքի տեսական և բարոյական բոլոր ճշմարտութիւնները իրենց հաստատութիւնը կը գտնեն Քրիստոսի Յա-րութեան մէջ: Այն որ կը հաւատայ Քրիս-տոսի յարութեան, տրամաբանական անտե-ղիտալի ստիպումով կը հարկադրուի հաւա-տալ նաեւ կրօնքի միւս խորհուրդներուն և վարդապետութեանց և միանգամայն կը խը-րախուսուի ուղղելու իր կեանքը:

Քանի որ ստոյգ է թէ Քրիստոս Յարեալ ի մեռելոց, ուրեմն ստոյգ է նաեւ թէ անի-կայ լոկ մարդ չէ, որովհետեւ մեռեալ մար-դը չի կրնար ինք իրեն յարութիւն առլ, ուրեմն ստոյգ է նաեւ որ անիկայ Աստուած ալ է, որովհետեւ Աստուած միայն կրնայ այսօրինակ հրաշք մը գործել: Քանի որ Քրիս-տոս Աստուած է ուրեմն իր կրօնքը աստուա-ծային է, իր հաստատած սուրբ խորհուրդնե-րը աստուածային են, իր հիմնած Եկեղեցին աստուածային է, և անոր հաւատալով վըս-տահ ենք թէ չենք խաբուիր: Քրիստոս յա-րեալ ի մեռելոց. ուրեմն ճշմարիտ է որ մար-դուս հոգին անմահ է. յաւիտեանս յաւիտե-նից կամ պիտի երջանկաւայ արքայութեան

մէջ կամ պիտի թշուառանայ դժոխքին խոր-
ւը: Քրիստոս Յարեալ ի մեռելոց. ուրեմն
ստոյգ է, իր վարդապետութիւնը ճշմարիտ
է, որովհետեւ ինք Աստուած է, ամենապէտ
է, ամենաբարի է, չի կրնար ոչ խաբուիլ ոչ
ալ խաբել: Ահա այս ամէն մեծ ճշմարտու-
թիւնները յայտնելով է որ Քրիստոսը Սուրբ
Յարութիւնը ոչ միայն հաւատքը կը հաստա-
տէ ամրապնդ, այլեւ կը զօրացնէ յոյսը և
ուժ կուտայ յարատեւելու առաքինութեան
մէջ:

Քրիստոսի Սուրբ Յարութիւնը ստոյգ
գրաւականն է մեր ալ յարութեան. Զի ու-
պէս յարեալ Քրիստոս ի մեռելոց փառօքն
Հօր, նոյնպէս եւ մեք ի նորոգումն կենաց
երջնացում, (Հոովմ. 2. 4): Մենք կ'ըսէ Ա-
ռաքեալը Յիսուսի հետ ամբողջ մը կը կազ-
մենք, մարմին մը. որուն գլուխը ինքն է. կա-
րելի է որ իրմէ տարբեր վրձակ մը ունե-
նանք, ոչ երբէք: Դանի որ ինք յարութիւն
առաւ, մենք ալ իրեն պէս յարութիւն պի-
տի առնունք որ մը: Մեր մարմինն ալ իրե-
նին պէս թափանցիկ պիտի ըլլայ որ մը, փա-
ռաւորեալ, անմահ, անապական, արեւու
պէս լուսաւոր, հոգիներու պէս նուրբ, զերծ
ամէն տեսակ ցաւէ, լի ամէն տեսակ հա-
ճոյքներով: Ինչ միտիւթարական ճշմարտու-
թիւն, ինչ երջանկութիւն:

Իայց այս երջանկութեան արժանի ըլլա-
լու համար պէտք է որ այս աշխարհքին վը-
րայ հաղորդակից ըլլանք Յիսուսի կեանքին:
Յիսուսի կեանքին զմեզ հաղորդակից ընողը
մի միայն անոր շնորհքն է: Զանանք ուրեմն
ամէն գնով պահելու զայն եթէ ունինք, իսկ
եթէ դժբախտաբար մահու չափ մեղքով
զուրկ ենք անկէ, փութանք ամէն բանէ ա-
ռաջ զայն ձեռք բերելու ապաշխարութեան
սուրբ խորհուրդով: Այս կերպով միայն կըր-
նանք մասնակցիլ Քրիստոսի Սուրբ Յարու-
թեան պարգեւած անզուգական բարիքնե-
րուն: Մեր միակ փոյթն ու հոգը թող ըլլայ
ուրեմն ստանալ և պահել Աստուծոյ շնորհքը:
ան տակաւ առ տակաւ պիտի հասցնէ զմեզ
փառաւորեալ վիճակին Քրիստոսի, որ այժմ
յարութեալ մարմնով հօրը աջ կողմը բազմած

կը խրախուսէ զմեզ, և կ'ըսէ. Ինչպէս որ ես
անմահ եմ, երջանիկ եմ, դուք ալ որ մը ին-
ծի պէս պիտի ըլլաք, քաջալերուեցէ՛ք, յա-
րատեւեցէ՛ք շնորհաց մէջ, վստահ եղէ՛ք որ
որ մը հազուով և մարմնով պիտի վայելէք
այստեղ յաւիտենական հանգստութիւնը:
Ք.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ (*)

Ա. Լ. Թ. Ը. Ն. Ժ. Ը. Պ. Ա. Պ.

Յիսուս Քրիստոս եպարքոզ Բէնօի Բէնօիսի
Ալլահ էվաթը քեմիյէ էքմէթի
Իլլա Ալլահա խաոս օլան մէհապպէթի իէ իսթէթի
(Տեվաթի)

Յագաթ, ես՝ Բագաթ, Ֆիքրիմէ պիր
շիւպէն արիզ օլույօր, եանի աճէպա Յիսուս
Քրիստոս իսթէթիյի գատար սէվիլմիշ մի
տիր, Աճէպա յէվէնի սէվտիյինին խաթրը
իչուն հէր տիւրլիւ ֆէտաքեարլըղա սէվզ
իտէն պիր մէհապպէթլէ, տայիր հէր տիւրլիւ
մէհապպէթլէրէ թէֆլիւզ իտէն պինապիր
պիր մէհապպէթլէ սէվիլէպիլմիշ մի տիր:

Էյէր պունա շիւպէն իտիյօրսան, կիթ,
րէճա իտէրիմ. կիթ վէ Խալլընզ արվարա-
լընլըն սէսի տէհշէթտէ պրապան պիր Գար-
միլ մանաթըրընըն գարուսընը չալ, Գարըն-
ա չըգան իլք կէնճ գըզս սիւալ էյլէ քի,
տիւսեանըն քէնտիսինէ թէպէտիւմ էյլէտիյի
վէ խայալաթ վէմանը օլան կէնճլիք չաղըն-
աա յիլլին հէր շէյի թէրք իթմիշ, ապա քէ-
պէլէր կիլլիմիշ վէ շու տէմիր բարմոգ-
լըզլարա շէքրլմիշ տիր: Օ սանա Քրիստոսըն
մեհապպէթի իչուն, ճէվապընը վէրէճէք
տիր: Իշթէ Քրիստոսըն մէհապպէթի քրիս-
թիան պաքրէրէրինի թէվլիա իալճէք գա-
տար գալի օլմուշ տիր: Սէօր տը Շարիթէ,
Իրթլիթ Սէօր տէ Իօվը թէմմիյէ օլունան վէ
խաթթախանէլէրտէ չալըլան, ֆապիրլէր ի-
չուն տիլէնէն բահրպէլէր Յիսուսըն մէհապ-
պէթլինին էսէրլէրի տիրլէր: Առաքեալ, մար-
տիրոս, հէք օնտան իլէրի կէլմիշ տիրլէր:
Յիսուսըն մէհապպէթի ինսանը քէնտի գա-

(*) Տես թիւ 139, էջ 180:

յիֆիլիյի, խօտբէսէնտլիյի իչինտէ ալարագ, վէ ծնը պիքիւրիք, մարտիրոսըզ վէ առաքեալըզ թաճը միւսէլլէսիյլէ թէթվիճ իտէրէք, մէհապպէթին էն երւքսէք վէ ալլահանի զէրվէլէրինէ գատար երւքսէլթմիշ տիր:

Օ պուռնաան տահա զիյատէսինի եարմը տըր. չիւնքի էզիյէթ չէքմէք, էօլմէք՝ մէհապպէթին էն ալի մէրթէպէսի տէյիլ տիր, չիւնքի ֆէտաքեարըզըն տէրէճէի նիհայէսի տէ պուռնար տէյիլ տիրլէր: Ֆէտաքեարըզըն տէրէճէի քէմալը, սէվտիյիմիզին էօլտիւյիւնիւ կէօրմէք տիր: մէհապպէթին էն ալի մէրթէպէսի, մէսէլա պիր վալիտէ իչին, Յիսուս Բրիստոսա հայաթընը գուրպան իթմէք տէյիլ, էվլատընըն հայաթընը կէօզլէրի էօնիւնտէ ֆէտա էյլէմէք տիր: Պու տա կէօրիւմիւշ տիր: էվլատընը ֆէտա իտէճէք գատար Յիսուս Բրիստոսը սէվէն վալիտէլէր պուլընմը տըր: Յիսուս Բրիստոս պուռն իսթէմէյէ իճթիսար իթմիշ վէ տէսթրէս օլմայա միւվէֆֆազ օլմուշ տըր: էվվէթ, տահա հէնուզ թէրքի հայաթ էյլէմիշ իտի, իշթէ քրիսթիան վալիտէլէր էվլատարընը սիզլէրինին իւզէրինէ գօյարագ օնա. «էվլատըն, Յիսուսա խըյանէթ իթմէնի կէօրմէքտէն իտէ, էօլմէնի կէօրմէյի թէրճիհ իտէրիմ» տէրլէր իտի: Հէմ տէ տէտիքլէրինի եաքարլար իտի: վալիտէլէր էվլատարըլլա պիրլիքտէ հաքիմլէր հուզուրընա չըգարլար, մահպիլէրէ էնէրլէր: տար ազաճընա չէքիլիլէր վէ չայէտ օնլարըն զարֆ տիւշէճէքլէրինէ տաիր պիր ազաճըզ շիւպհէլէնսէլէր, էվլատարընըն ալազլարընա գաբանըր «էվլատըն, տէրիսաթըր էյլէ քի պէն սէնի րահմիմտէ թաշըմըշ, սէնի սիւսիւմէ պէսլէմիշիմ, վալիտէնին խաթըր իչուճ օլտուճ, Յիսուսա խըյանէթ իթմէ տէրլէրտի:» Պու կիպի սըրալարտա պիր գատընըն, պիր վալիտէնին հիսս իթտիյինի, Ֆէլիսիթէլէրին, Սիմֆօրօզլարըն վէ սայիլ բէք չօզլարընըն տուլտուղընը տուլմագ վէ հիսս իթմէք ինսան գալէմի եա քէլամը իլէ թարիֆ օլուճուր շէլէրտէն տէյիլ տիր: Նալընըզ շու գատարըր աիւաշլըր քի, պու կիպիլէրին պու կէօնա ֆէտաքեարըզլարընը միւքեաֆաթ-

լաւագ իչուճ, ճիւրա էվլատարըր գուճագլարընտա օլարագ պիր սաստէթի էպէտիյէ կէօզէտէպիլմէք լութֆընը վէրմէք չօզ տէյիլ տիր:

Պուրաուա հէյէճանըմ զալէհանա կէլիյօր: Պու կիպի պիր մէհապպէթէ մազհար օլան քիմ տիր: Պիր կիւն Նահուտիսթանըն քիւլէք պիր քէօյճիյէլինտէ «Պէն հէր քէս թարաֆընտան սէվիլմէյի, հէր շէյտէն իւսթիւն սէվիլմէյի իսթէրիմ» տէյիլ տէ իսթէտիյինի էլտէ իտէն վէ քէնտինէ կէօսթէրիլէն մէհապպէթին սաիր հէր տիւրլիւ մէհապպէթլէրի սօլտուրըր օլտուղընը կէօրէն քիմ տիր: Թէքրար սօրարըմ, քիմ տիր օ: Օնըն սատէճէ պիր ինսան օլտուղընը սէօլէմէյէ քիմ ճէսարէթ իտէպիլիր:

Ձէմանըն պիր չօզ վագալարընը թէտգիզ իթտիքտէն սօնրա, պիր ազ տա էպէտի շէլէրի թէտգիզ իթմէք իչուճ Սլլահըն քէնտինէ պախշ էյլէտիյի լութֆ սէնէլէրինտէ Սէնիթ էլէն ատաօընըն մահպուսընա էն զիյատէ թէէսսիր իտէն ճիհէթ վէ պիւրհան եօգարտա սէրա իտիլէն պիւրհան կէօրիւնիւրտիւ: Շու սուրէթլէ իտարէի քէլամտա պուլուճուրտը: «Յիսուս Բրիստոս ինսանլարտան սէվիլմէյի իսթէյօր: իսթիհալը էն միւշքիլ օլան շէյի, եանի պիր ալիմին պօշ եէրէ պազը տօսթլարընտան, պազը քէրրէ պիր բէտէրին քէնտի էվլատարընտան, պիր զէվճէնին քէնտի զէվճինտէն, պիրատէրին պիրատէրտէն իսթէյիպ տէ չօզ քէրրէ ալամասըրը շէյի: երւրէյի՝ քէնտիսի իչուճ իսթէյօր, պուռնը թալէպ իտիյօր, պուռնա միւվէֆֆազ տա օլույօր: իշթէ պէն պուռնան օնըն Սլլահ օլտուղընը իսթիտալ իտէրիմ»:


Շուճը տա իլալէ իտէր քի: «Բրիստոս սէօլլէյօր վէ իշթէ պատէմա սիւսիլէլէր վէ միլլէթլէր գան պաղընտան գազի պիր լապըթա իլէ քէնտինէ մէրպուլթ տըրլար, տիւկէր հէր տիւրլիւ պաղլարտան տահա մուգատտէս, տահա գազի պիր պաղ իլէ պաղըրտըր: Պիր մէհապպէթ ալէվի եապար քի ինսանտա քէնտի նէֆսինէ օլան մէհապպէթի մահվ իտէր, պաշգա հէր տիւրլիւ մէհապպէթին ֆէվպիլիտէ գալըր... Պէն չօզ տէֆա

պու շէյի տիւշիւնտիւմ վէ հայրէթտէ գալ-
տըմ վէ պու հալ սուրէթը գաթիլէսէ օնուն
Ալլահըղընը իսպաթ էլլէր:»

Պէնիմ ազ էվվէլ թային էլլէտիյիմ, Յի-
սուս Բրիստոսըն քէնտի էօլլումիւնտէն սօն-
րա սէվիլմէք իսթէմէսի իսուսուսընա տահա
զիյատէ պիր էհէմիյէթ վէրէրէք Նաթօլէոն
տէր իտի քի. «Պէն պէնիմ ուղրուում էօլէն-
լէր իւզէրինէ ինճայի թէէսսիր էլլէրիմ, ֆա-
գաթ պէնիմ հազըր պուլլումագըղըմ շարթ
ըտը. էլէթթրիթի նազարըմա, սէսիմէ, սէ-
զիւմէ լիւզում վարտը... Պու կիւն Սէնթ
էլլէնտէ պուլլումսըղըմ շու գայա իւզէրինէ
չիվիլէնմիշ կիպի եալընըզ գալմըշ օլտուղըմ
հայտէ, պէնիմ պէտպաթթըղըմըն ըէֆիզէրի
նէրէտէ տիրլէր, էվրօթատա պէնիմ լէհիմտէ
պէնիմ իչուն հիշ ետրինտէն գըմըլտանան վա՛ր
մը տոր. տօթլարըմ նէրէտէ տիրլէր» . վէ
քէնտիւնտէն օն տէօթիւնճիւ Լուիյէ նազը
քէլում իտէրէք վէ ինսանի շէյլէր հազգընտա
եանըմըշ օլտուղընը թանըլան պիր նազարլա
օ պէօյիւք հիւքիւմտարա պազարագ տէր ի-
տի. «Ս պէօյիւք հիւքիւմտար տահա էօլմէզ-
տէն էվվէլ եալընըզ պրագըլմըշ իտի, Վէր-
սայլտա եաթագ օտապընտա սէրայ խատէ-
մէսի թարաֆընտան եիւզ իւսթիւ պրագըլ-
մըշ, պէլքի տէ օնլարըն իսթիհզաւընա մա-
րուզ գալմըշաւ. Արթըզ Լուի օնլարըն հիւ-
քիւմտարը տէյիլ, առէթա պիր նաաշ իտի,
պիր քէֆէն, պիր չուզուր, գօզմագ թէհիւ-
քէսինտէ պուլլումայան պիր մէքրուհիյէթ
իտի. Ազ սօնրա պանա նասիպ օլաճագ օլան
տա պու տըր. իշթէ պէնիմ պաշըմա կէլէ-
ճէք օլան տա պու տըր: Պէնիմ գէվալլը հա-
լիւլէ, պիւթիւն ճիհանտա վազ օլունան,
սէվիլէն, սէճտէզըլընան վէ տիրի օլարագ
ինճաի հիւքիւմէթ իտէն Բրիստոս արասընտա
նէ պէօյիւք, նէ տէրին կիրտապլար վար
տըր:

Չաթէն Պօնարարթտան էվվէլ Բասգալ,
օ քեաղըտ բարչալարը իւզէրինէ եազըպ տա
պիլլախէրէ մասուլք կիպի, ազընտան սա-
չըլան շիմէք շիւլէրի կիպի գապուլ օլու-
նան իւշ քէլիլմէլէրիյլէ պու հազիգաթը վա-
զի սուրէթտէ իգրար իթմիշտի. «Յիսուս
Բրիստոս սէվիլմէյի իսթէտի վէ հէմ տէ սէ-
վիլի, օ Ալլահ տըր»:

(Մապասի վար)



ԱՌ ԱՂԵԳՍԱՆԴԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Ի ՋՄԻԱԾՆԻ

Կր սկսինք հրատարակելու այն վաւերաթուղթը ո-
րու վրայ խօսեցանք Արձագանքի մէջ (թիւ 140 եւ
էջ 195): Պոլսոյ էյմ. Հայոց՝ 1706ին, Կաթողիկէ Հա-
յոց դէմ բանադանք բերել Տալու համար էջմիածնի Ա-
ղեքսանդր Կաթողիկոսին գրած նամակն է. այն տհաւոր
հալածանքներուն՝ օրոցում վան ասէն Կաթողիկէութիւնը
սպառսպուռ չնչել կը շանային, կեղծսուտ խաբու-
թեանք հոգեւոր Հաւատաւանութեան զոյն մըն ալ Տալու
կը ձեռնարկէին, ինչպէս հրեայք կ'ընէին Պիղասոսի.
«Մենք օրէնք ունինք, ու մեր օրէնքին համաձայն պէ՛տ
է սպաննուի» Յիսուս: էջմիածնականաց այս փառի-
սական օրէնքին առաջին արդիւնքն եղաւ Տ. Կոմիտա-
սայ հաճախութիւնը:

Թէեւ վաւերաթուղթիս քննօրինակութեան զուխը
ուրիշ գրով եւ օտար մեկնում գրուած է՝ «Նամակ առ
Դանիէլ Կաթողիկոս էջմիածնի», սակայն յայտնի սխալ
ըլլալով, մենք Աղեքսանդր դրինք, որ է Ջուղայեցին
(1706-1714):

Նոյնպէս մի այլ գրով սա ծանօթութիւնն ալ կայ,
«Ընդօրինակեալ «Կրօնկ» հանդէսէն զոր Աղաբեգեանց
սկսաւ հրատարակել ի Թիֆլիզ, յամի 1860 Յուն. 1, որ
եւ դադրեցաւ 1863ին»:

Այս վաւերաթուղթը կը հրատարակենք՝ ինչպէս որ
է, առանց ո եւ է սրբագրութեան:

Նոյնպէս միանգամ քնդ միտ կը ծանուցանենք թէ՛
այս նամակը ամենէն օրինաւոր եւ սրբագան բաները ի
յանցանս կը գրէ Կաթողիկէից, եւ զանոնք կ'անուանէ
հերձուածող, հերեթիկոս, ուրացող, եւն., անոր
համար միայն որովհետեւ Հռոմայ Ս. Եկեղեցւոյն, Քրիս-
տոսի Տեառն Մերոյ Ս. Պետրոսի վրայ հիմնած միակ եւ
նշանաւոր Եկեղեցւոյն վարդապետութիւնը կ'ընդունին
եւ անոր կը հնազանդին: Պէ՛տ չկայ կարծենք դիտել տա-
լու թէ ամէն հերեթիկոսներու եւ հերձուածողներու,
ինչպէս նաեւ բողոքականաց քննադատապէս, ա՛ն եղած
է չարաւուրես հնարագիտութիւնը, քաջութիւն, զրպար-
տել, հալածել:

Եւան. Խմբ.

Բազմաչարչար Վկային, որոյ հիմնեցեալ
ի Բրիստոսէ յեկեղեցի Կաթողիկէ Առաքելա-
կան. Եւ ի հոգւոյն կոչեցեալ գահապետել
զվիճակ Թաթէնոսի առաքելոյն՝ որոյ շարա-
դրեցեալ Կաթողիկոսութեան Արամիան յազգիս
Հայկազնուոյ եւ է հասեալ մինչ ցայս վայր-
լուեաց Բ. ամ ինչ յունայն աթոռն հայրա-
պետական ի տունս Մեծի Արամիան. վասն

զի մերձեցաւ ասէ արքայութիւնն առ մեզ, դեռ եւս ոչ է մոռացեալ զմեզ Բարերարն Աստուած: Զի տեսանեմք զնշոյս արեգական ծագեցաւ մեզ յարեւելից. պայծառացուցէ զյամպացեալ սիրտ մեր ի սգաւորութենէ նկատեմք: Եւ այս նորագիր ճենճերանաց երկարուն խմորուն խնդրեմք յանջատել: Ո՛վ Քահանայապետ Աստուծոյ և դու ի վերուստ կաշեցար սեփական յաթոռ հօր քո բազմել՝ փոխանորդ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մեր, և բարի համբաւ քո տարածեալ յամենայն երկիր՝ ոչ միայնումս, այլ Յունաց և Հռոմաց վերձանուցեալ յամենայն Հայոց՝ ինքնակալ և ծայրագոյն Կաթողիկոս, Որպէս երբեմն Շնորհային Ներսէս՝ նմանեալ Սուրբ Հօռն մերոյ Գրիգորի. այժմ երանելիդ երանելոյն Կիւրդի Աստուածաբան Աղեքսանդրացւոց մեծ Վկային Քրիստոսի յերկուց անճառ զանչփոթ միոյ բնութեանն: Վասն որոյ ցնծալ այսօր եկեղեցի Աստուծոյ՝ վասն քո առնել տօնախմբութիւն և ըրախութիւն հոգեւոր, Թէպէտ հօր որդին մեր վասն հաւատոյ տարագերեցաւ: Արդ օրհնեմք և գովեմք զանհաս բարերար ամենակարողն Աստուած, որ ետուր մեզ հովիւ քաջ. խնդրեմք կարողացի սքանչելեօք հովել զհօտն Քրիստոսի: Զմոլորեալսն դարձուցանել, զգայս ի բաց վարանել, և զոչ եկեալսն տարածերժիլ. զթիւրեալսն ուղղել: Արդ ամենայն տունս արեւմտական մեծի արքայանիստ՝ և մայրաքաղաքին Կոստանդինուպոլիս զետեղեալ լուսաւորչածին և Քրիստոսաղաւան ուղղափառ եպիսկոպոսօք, վարդապետօք, քահանայիւք, սարկաւազօք, դպրօք և կղերիկոսիւք, երէցփոխանք, յաթոռակալք և իշխանք: Նախ հացապործ վարպետայք, հիւանդործ խալֆայք, մուճկարար վարպետայք, գերձակար հանդերձից, գործարար բեհեգունեաց՝ և ամենայն արուեստաւորօք արամբ մեծամեծօք մինչ ի փոքունս խոնարհեալ իբր ծառայական գոյ ի հեռաստանէ, և ի խորոց սրտէ՝ նախ յերկրպագութիւն Սուրբ Իջման տեղի Միածնի Որդւոյն Աստուծոյ, Երկրորդ երեսանկեալ ստորոյ գահոյից քո սուրբ յաթոռոյն՝ Թաթևաթի, Բարդուղիմէոսի՝ և Գրի-

գորի Առաքելոցն Քրիստոսի: Անձրեւածին և արտասուանել աչօք, լերկրեցեալ սրտիւ՝ համբուրեմք թանալով երկնադնաց յոտդ և բազկատարած բազուկք քո: Եւ կրկնապատիկ օծեցեալ յաջ սրբազանիդ՝ Մկրտիչ անմահ գառին Աստուծոյ մարմնոյ և արեան հպեցեալ քահանայապետ: Եւ ասեմք օրհնեալ ես դու ի վերայ մեր, և օրհնեալ ես յամենակարողէն Յիսուսէ Քրիստոսէ՝ որոյ կամակցութեամբն հրաւիրեցար հանգչել ի գահից Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին: Եւ ամենեւեմ ասեմք՝ Արժան է, կեցցէ՝ իբրեւ արքայօրէն զՀայրապետն մեր՝ անփորձ և անսասան յուժնքէ, իբրեւ զվէժ անդրդուելին և եղիցիս սիւն հաւատոյ տանս Հայաստանեայց: Զի շնորհաւոր և փառաւորապէս ժառանգեցես կարողութեամբ յԱստուծոյ աթոռն Լուսաւորչի, և ի պարծանս Հայկազուն Արամեան յազգիս՝ հանդերձ հանդիսացեալ յաթոռոյ յաջ և անեակ հիւսելոյ խմբից՝ արհի եպիսկոպոսացդ և զաստուածաբան վարդապետացդ և կուսակրօն քահանայիցդ և եկեղեցական դասուցդ կարգաւորութեանցդ: Վեհափառ պարոնացդ և խոճամէլիք զատէ իշխանացդ՝ որք են հաւատարիմ տանն յԱստուծոյ որոց մատուցուք ողջոյն Յիսուսանդ համբուրիւ. զի ողջ լիցին գոհութեամբ ի պարծանս յամենայն Հայոց Տեառն Մերոյ Սրբազան Աղեքսանդր Կաթողիկոսին խնդալ նովիմք ի Տէր ամէն:

Զայս գիտութիւն լիցի հոգեւոր հօրդ մերում, զի խոնարհեցուցես յունկն քո լուրջես արդունալս մեր՝ մեծի մաղթանօք, զոր խնդրէ մանկունք քո և զինչ արարից այսքան երկարութեան իրացն եղելոց եկելոցն զոր գործեցին նոր իմն արիանոսքն, զի թէ գրեցից զամենայն, երկնչիմք լսելեացդ մի՛ լիցի ձանձրութիւն. եթէ ոչ գրեցից զվէրսն ո՞ ծանուցէ բժշկապետի վեհանձնութեան քում: Զի բազում անգամ ծանուցաք նախագո եղբօր քում, և նա անհոգ լեալ կենցաղավարութեամբ իսկակից իբրեւ ի ժամանակս Նզրի. թէպէտ ոչ էր հաւաստեալ ինքն. սակայն խնեական գոլաւորութեամբն գնայր զհաճոյս ոմանց՝ վասն զի մի՛ յարուս-

ցէ թշնամի իւրոյ արքայութեանն։ Որոյ խնդրեմք անբաւելի յողորմութենէն Յիսուսէ՝ Բրիտտոսէ՝ չնորհել գնեռումն յանցանացն։ և զատաւորեալ շարադրեացէ նախնի սրբոց հայրապետաց՝ և աստուածաբան վարդապետաց։ Եւ արդ այժմ եղեաք որպէս յաւուրսն փոքուն թէոգոսի կայսեր։ յարուցաւ նեստորիոս պատրիարքն՝ Կոստանդինուպօլսի՝ քաւրոզ կարդացեալ ի վերայ Բրիտտոսի յերկուս հատանել և բազում գնացին զկնի, և ծանուցեալ Մեծին Կիւրղի՝ սուգ սգեցեալ հանդերձ վարդապետօքն, զինուորեալ ընդդէմ հակառակամարտին մեծ ի հանդէս պատեցաւ նեստոր ի բանս իւր գնալով յաքսոր։ Յետ այնու ոչ շատացեալ, եղեւ երկրորդում ժողով ընդդէմ Լեւոնական տումարին։ Եւ ընդդէմ ախոյեանն՝ զնոյն Կիւրղի աշակերտ թէոսկորոս Մեծ Վկայն Բրիտտոսի՝ յաղթելով նոցա, լռեցոյց զհայհոյութիւն եկեղեցւոյն Աստուծոյ մինչ անօրէն և արիւնհարբու ժողովոյն Բաղկեղոնի, յանդիմանելով նոսա՝ յաքսորեցաւ ի Մարկիանոսէ՝ Մեծ Վկայն Բրիտտոսի ընկերօքն իւրօք, և ի ժամանակին կոչեցեալք էին հարքն սուրբ յերկրէ յերկնս։ Եւ հաստատեցին զտումարն Լեւոնի բռնութեամբ ի ձեռն Մարկիանոսի կայսեր որպէս և կամեցան, և նոյն գոյ մինչ ցաստ վայր թիւրելով յազգ և ազինս։ Բայց ո՛չ միաբանեալ Հայք ընդ նոցա։ Այլ որոց ոմանց թիւրասիրաց ապստամբեալք Սուրբ յԱթոռէն էջմիածնի՝ գնալով ի Հոռվմ, ուրանալով զուղիղ դաւանութիւնս նախահարցն սրբոց, ցուցանելով զինքեանս նոցա ճշմարտասէր, ուղղափառ՝ և Կաթողիկ՝ հնազանդ միայն Պետրոսի յաթոռոյն և յաթոռակցի որոց։ Եւ բազում ամբաստանութիւն ի զուր զրպարսին յազգս Հայոց՝ քօլ հրետիկոս՝ և հերձուածող համբաւելով Հոռոմ եկեղեցւոյ Փափին, և կամ փոխանորդաց նորին։ և թիւրամիտք Հոռոմասմանց, պատրանօքն խաբեալ ցաւագնեալ սրաիւ կոծեն զյազգս Հայոց՝ աւանդ որք են ի հրետիկոսութեանն։ Վասն որոյ ընկալեալ զնոսա սիրով՝ տալով նոցա կարգ ճիշդիւրական, ունեւով գիր փաթենդա ի ձեռին իւրեանց՝ շրջելով սահմանս Հայոց զգրկ

զոլով ի տանէ ի տուն՝ խրատել զնոսա զիւրութեամբ, հեշտացոյցք ճանապարհաւ։ Զխոստովանութիւնս եթէ իցէ արուակն և իգակն պէսպէս տիղմն ապականութեան՝ զայդ ամենայն ասէ՝ ընդդէմ է բնութեան մարմնոյ և ոչ ընդդէմ հոգւոյ։ Որ է՝ նախանձ, հպարտութիւն և հայհոյութիւն, ևն։ Եւ եթէ իցէ ոք ընդդէմ բնութեան մարմնոյ մեղիցէ, կրեցէ յապաշաւանս այս՝ է անգամ ողջոյն ասիցէ դէպ յարեւելս ընդդէմ պատկերի կուսին Մարիամու՝ խոնարհելով ի ծունկս, և նովիմք ներումն լիցի։ Եւ այսպիսի հեշտացոյցք աղանդիւ պատրեցին քաւուրմ տիմարաց։ Նախ հեշտասէր և փափկասէր չար իշխանք Հայոց զի լիցի իւրեանց թիկնապահ և եղեւ այնպէս, և եթէ քահանայից, իշխանաց, և կամ ռամկաց դպրաց արանց և կանանց կուսից՝ մոլորեալ ճողոպրեցան յազգս յազգէս, և եղեն հատեալք ի մէջ թշնամի՝ և հակառակ միմիանց։ Խնդրելով զարիւնս իրերաց հեղցուցանել յերկիր խեռ եւ նախանձ, ալմուք եւ խռովութիւնս աննուազ, մատնելով զմիմիանս ի բաւտի եւ ի տուքանաց։ Եւ ի միում տանն յարիցէ որդին ի վերայ ցհայրն և ասիցէ, ո՛վ մոլորեալ և տպէտ՝ ընդէր ալիքան կուրացեալ մնալով մեռանիս հաւատով Հայոց, որ քնաւոց ես ի վիհս ներքին զժոխս՝ տեսանես ուստի ծնանին ատելութիւնք՝ և անհաւորին խաղաղութիւն, և սոքա քարոզով ոչ զղջանան, բայց ողորմութեամբն Աստուծոյ՝ ակն ունիմք զքոյին հրամանն անիծից՝ արագահաս ժամանեցի ի վերայ այնոցիկ որք ուրացան զսուրբ հաւատս մեր։ և հակառակին ճշմարիտ Լուսաւորչադիր օրինացս, որով խրատեալ ծանիցեն զճշմարիտն, զի դեր ևս ոչ ծանեան։ Եւ ամենայն ազգ և ազինք ի գովաբանութիւնս արարկէին զպարկեշտութիւնս ուսանել միայն ի Հայոց։ Եւ այժմ ամաչեցեալք, և տեղացեալ ի վերայ մեր ծանաք, ծաղրաբանք ծիծաղական Հրէից և ալլասեոից։ Վասն դարձուածոց և աղթարմա ուրացող, հայհոյիչ, անարգիչ, անհնազանդ սահմանաց և կանոնաց Լուսաւորչադիր յօրինացս և Բրիտտոսադաւան հաւատոց հանապազ հակառակ և անարգիչ հոգւոյն Աստուծոյ, որ հրաման է իւրոյ՝ ի կապանս անթողելի։

(Շարունակելի)

ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ՍԿԶԲԱՆՑ ՎՐԱՅ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ (*)

Ե.

«Բարեկիրք եւ բարեմոյն ըլլաս,
«Եւ պիտի ըլլաս սիրելի»:

Բ.

«Բարեմոյն ըլլաս»

(Շար.)

Հոգւոյ քաղցրութիւն, հաճոյակատարութիւն, հեղութիւն և բարեկրթութիւնն զքեզ փնտռել պիտի տան. բայց եթէ անհաւատար բարք ունենաս, չպիտի ուշանան քեզմէ հեռանալու, քեզմէ փախչելու: Անհաւատարութիւնք և քմահաճոյք կը սկսին պաղեցնել, և փութով կը հեռացնեն ընդ միշտ զանոնք, որ զմեզ կը սիրէին: Ամէնէն արժանաւոր անձն, իրեն անհաստատ և անհաւատար բարութեց պատճառաւ, անտանելի կը դառնայ: Կը ձանձրանան վերջապէս իրեն արժանեաց գերի ըլլալէ. իւր յաճախակի և անակնկալ քմահաճոյք, իւր ընկճող ալլանդակութիւնք՝ իւր ընկերակցութեան օգուտները կարի սուղի կը նստեցնեն. հաստար բարութեց տէր մարդու մը յարելու համար զայն կը թողուն, որ իրմէ շատ նուազ սուղ է իւրենց համար: Հանճարեղ մարդու մը վրայ ոչինչ այնչափ չի վիրաւորեր զմարդ և ընկերութեան մէջ իրեն այնչափ վնասակար չըլլար, եթէ ոչ բարութեց անհարթութիւնն: Այդ դարձարուն հանճարն, այդ զուարթ սեղանակիցն, զոր դուն որոշած ես քու տանդ մէջ ընտիր ընկերութեան մը հաճոյք պատճառելու համար, յանկարծ, և հասարակաց դուարթութեան միջոցին, խելացիոր երեւակայութեանց անձնատուր կ'ըլլայ: Քաղցրարարոյ և բարեկիրթ մարդն կ'ըլլայ դաժան. զուարթ մարդն կ'ըլլայ տխուր, և թանձր չորդիներ կու գան իր զիմաց պայծառութիւնը նսեմացնել: Ո՛րչափ արդահատելի է այն մարդն, որ ստիպուած է սպրեւել անպիտի մէկու մը հետ, որ յաճախ բարութեց անհաւատարութեան նո-

պաներ կ'ունենայ: Ատիկա արջ մի է. կանայք, տղաք, բարեկամներ, ամէնքն իրեն մօտենալու կը վախնան: Ինք կրնար ընկերութեան բերկրութիւնն ըլլալ, և անոր պատուհասն և սարսափը կ'ըլլայ: Թեքէ՛ ուրեմն, երիտասարդ հասակէդ սկսելով, քու քնաւորութիւնդ, և շատ մը վշտեր խնայած պիտի ըլլաս ուրիշներուն և նոյն իսկ քու անձիդ: Պատուաւոր մարդու մը համար վշտերուն ամէնէն դժնդակն է ատուիլը, կամ մարդիկները իրմէ փախցնելը, և ուրիշներուն համար անտանելի դառնալը: Ի՛նչ տարիք ալ ունենաս, ջանա՛, ամէն տեսակ միջոցներով, և մանաւանդ անոնցմով, զորոնք բարկութեան դէմ մատնանիչ ըրինք, քու բարկութիւնդ զսպելու, և զայն միշտ այնպէս քաղցր եւ հաւատար ընծայելու, որ ալլեւս քու ընկերակցութենէդ չփախցուի: Ոմանց պէս մի՛ ըսիր. «Իճգիճես ուղղելու համար Եւս ծեր եմ»: Քանզի, ընդհակառակն, ճիշդ այդ պատճառով համար հարկ է որ եւս սոսաւել զայն ընելու ջանք ընես: Հոգւոյն թերութիւնները, զիմաց թերութիւններուն պէս, ծերանալով՝ առաւել եւս երեւան կուգան: Դուն քեզի յաղթելով, վերջապէս բարկացող լնաւորութեանդ այլանդակութիւնը պիտի զսպես, կամ սոսուազն զայն կարի պիտի նուազեցնես, եւ անոր նպաները նուազ բուռն եւ նուազ յաճախ պիտի ընես:

Այդպիսի ճիգերն, որչափ ալ դժուարին ըլլան, ոչինչ կրնայ զքեզ անկէ տնօրինել: Բարութեց այս հաւատարթութիւնն մանաւանդ հասարակաց պաշտօններու վրայ զբաւուրդ անձանց կը վայէ, որ այնչափ պատկառելի եւ այնչափ արժանաւոր է այն զիրքին եւ պաշտօնին, յորում իրենք կը զբոսնեն: Բարիզի Խորհրդարանին առաջին գահերէց Պ. Հարլէյ, զայն գերազանցապէս ունէր: Հետեւեալ զէպքէն հնար է զայն դատել: Բարձր դասակարգի պատկանող տիկին մը, անկէ խնդրած մէկ շնորհն չկրնալով ձեռք բերել, մեծապէս վշտացաւ, եւ զժկամակեցաւ: Անոր մեկնելու միջոցին Հարլէյ ուղեց անոր մինչեւ դուռն ընկերանալ, տիկինն ընդդիմացաւ, եւ Հարլէյ համակամով

(*) Տե՛ս թիւ 140, էջ 199:

կեղծեց: Տիկինն իւր ճամբան շարունակեց այդ բարձր պաշտօնէին դէմ տրանջելով, որուն, ցած ձայնով, շատ մը կոշտ ածականներ կուտար: Իր ետին գառնալով, եւ զինքը տեսնելով. «Ան Պառն, ըսաւ անոր, դուք հո՞ւ եք»: «Տիկին, պատասխանեց իրեն Հարլէ, այնպիսի գեղեցիկ բաներ կը գրուցեմ կոր, որ անհնար է ձեզմէ բաժնուիլ»: Եւ մինչեւ անոր կառքը իրեն ընկերացաւ:

Փիլիպպոս Բ. Սպանիայի թագաւորն, որուն բարեպաշտութեան գովեստն արդէն ըրինք, ոչ նուազ բարուց հաւատարութիւն ցոյց տուաւ առթիւ մը մէջ, յորում շատ անձինք պիտի թերանային: Նամակներ գրելով զիչերը անցուցած էր, սովորութիւն բրած էր իւր նամակները ինքն անձամբ գրել: Իւր քարտուղարն նոյնները կնքելու եւ հասցէները գրելու աշխատանքը միայն ունէր: Ամէն նամակներն արդէն զրուած պատրաստուած ըլլալով, հատ մը միայն կը մնար, որ տակաւին թաց էր: Քարտուղարն, կէս քուն կէս արթուն, թաց նամակին վրայ փայլ ցոյցելու ուղեց, բայց փոշիի ամանին տեղ կաղամարն առաւ, եւ այդ նամակին վրայ պարպեց. որ, ինչպէս նաեւ միւս նամակներն, միշտնով սղոտտեցան: Թագաւորն հանդարտ հանդարտ այդ փորձանքը դիտեց, եւ քարտուղարին փոշիամոնը եւ կաղամարը ցոյցնելով, բաւականացաւ ուս խօսքերով. «Ահա՛ կալամարն, ահա՛ փոշիամանն»: Ապա սկսաւ բոլոր նամակները վերստին գրել, առանց ամենեւին առկէ յուզուած երեւնալու: Թարգմ. Ն. Մ. Վ. ԱՃԷՄԵԱՆ

(Շարունակելի)

Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԱԹԻԻՆԸ ՍՈՒԱՔԻՆ ԴԱՐԵՐՈՒՆ ՅԵՏԱՏԱԿԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՄԵՋ (Շար.)

Նախկին քրիստոնէից խորհրդաւոր լեզուն գիտցողներ լնաւ սարակոյս մը չեն կրնար ունենալ այս արձանագրութիւններու իմաստին վրայ: Անոնք հոգիւն Աւետարանինն է որ դեհ զանձն իւր ի վերայ ըջխարաց:

Հաս կը հաստատուին հետեւեալ վարդապետութիւնները. ա) Քրիստոսի աստուածութիւնը. բ) Ս. Խորհուրդ Հաղորդութեան. գ) Աստուածածին Կոյս դ) Հաղորդութիւն սրբոց. ե) Գլխաւորութիւն Հոգիմէսկան Եկեղեցւոյն:

Ո՞վ չի տեսներ որ Աբերկիոսի այս սճին մէջ կայ միեւնոյն գաղափար որ առաջ որդեց հոգիմէսկան գետնապաճաններու նկարիչները, երբ անոնք, այլեւայլ գոյզադրութիւններու ներքեւ, կը ներկայացնէին հացն ու ձուկը՝ գինւոյ քաժակին հետ: Այս բանաստեղծութիւնը կարգալու առեն ո՞վ չի չիչեր Կայրիստեան հոյակապ եւ հոգակաւոր որմանկարը որ կը ներկայացնէ Ս. Հաղորդութեան սրբապօրծութիւնը, յորում սեղանի վրայ կը տեսնուի հացն ու ձուկը, մինչդեռ կինը, Եկեղեցւոյ խորհրդանշանը, կոնայ նաեւ յուշ տծել «Հաւատքը», որ, ըստ բացատրութեան Աբերկիոսի, քրիստոնէաներու կը մատակարարէ աստուածային կերակուր:

Միեւնոյն խորհրդական լեզուն կը գրանուի նաեւ գրեթէ ժամանակակից արձանագրութեան մը մէջ ալ. ու շատոնց գտնուած է Գաղղիոյ Օթէօն քաղաքին մէջ: Այս յիշատակարանի մէջ քրիստոնէայ մը՝ Պեկտորիոս անուն, խօսք կ'ուղղէ բոլոր հաւատացեալներուն. զորոնք կ'անուանէ Որդիք երկնաւոր ձկան (իսթիս), եւ կը յորդորէ զանոնք աստուածային շնորհաց ջրոյն մէջ մաքրուելու եւ Ս. Հաղորդութեան խնջոյքէն կեանքակրուելու:

Պեկտորիոսի արձանագրութիւնը գտնուեցաւ Գաղղիոյ Օթէօն քաղաքին մէջ, 1839 ին, զոր Տ. Բիպրա հրատարակեց ու մեկնարանեց: Այս յիշատակարանը թերեւս երրորդ դարու սկիզբներէն է. կը պարունակէ հրամանակարք-վարդապետական մաս մը ստպէս: «Ո՞վ աստուածային ցեղ երկնաւոր ձկան, մաքուր սիրտ ունեցի՛ր, մանկանաղուններու մէջ յաստուածուստ ըղիւղ ջուրերու անմահ աղբիւրը խմելով, Ո՞վ բարեկամ, հոգիդ խնամէ՛ մշտարուղի ջուրերով իմաստութեան որ կ'առատաձեռնէ փարթամութիւն: Սուրբերու Փրկիչին քաղցր կերա-

կուրը ա'ռ . կե'ր ձուկը՝ անօթի ցանկութեամբ . ձեռքերուդ մէջ բռնած» :

Թանկագին խօսքեր , որոնք կը կապակցին այն ամէն գաղափարներու կարգին զոր մինչեւ հիմա մեկնեցինք և որ մ.լ. կը յիշեցնեն նաև շնորհաց ջուրը՝ (որ Ս . Կալիստոսի գեանադամաններուն մէջ նկարուած է Գոհութեան խորհրդոյն ձկան հետ) , Սրբուհւոյն Պերպետուայի տեսիլքին քաղցր կաթը՝ (որ նոյնպէս ներկայացուած է գերեզմանական նկարներու մէջ) , և վերջապէս առաջին դարերու մէջ Հաղորդութիւն առնելու սովորութեան ձեւն ալ մեզի կը պատկերացնէ , երբ քրիստոնեայք իրենց ձեռքերուն մէջ կ'ըղունէին սրբագործեալ երկնաւոր Հացը :

Սրբուհի Պերպետուա այսպէս կը նկարագրէ իր տեսիլքը . «Վեր ելայ , կ'ըսէ , ու տեսայ ընդարձակ պարտէզ մը , և անոր մէջ մարդ մը նստած , սպիտակահեր և հովուի զգեստով , որ ոչխարները կը կթէր . և անոր չորս կողմն առած էին հազարաւոր մարդիկ , ամէնքը ճերմակ հագած : Ու անիկա վերցուց գլուխն ու ինծի նայեցաւ ու ըսաւ . «Բարի՛ եկար , ա'զջիկս» : Եւ կանչեց զիս ու տուաւ ինծի իր նոր կթած կաթէն կտոր մը , և ես ընդունեցայ զայն ձեռնամաճ ու կերայ . ու բոլոր ներկաներն ըսին՝ Ամէն : Ոչո՞ւ ձայնէն ես արթնցայ ու բերնիս մէջ կար քաղցր լաւն մը» :

